
**ԽՆԴՐԱՌԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՈՉ ԿԱՆՈՆԱԿԱՆ ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐ ԶԼՄ-ՆԵՐԻ ԼԵԶՎՈՒՄ**

ԲԱՐՍԵՂՅԱՆ Ա. Գ.

Հայտնի է՝ խնդրառությունը բառերի ստորադասական կապակցության եղանակ է, որի ժամանակ ստորադաս անդամն ընդունում է գերադաս անդամի պահանջած համապատասխան ձևը (հոլովը)՝ պայմանավորված լրացյալի իմաստով, իսկ եթե այն բայ է, նաև սեռով՝:

Մեր խոսքն այստեղ ոչ կանոնական խնդրառական կապակցությունների մասին է:

ԶԼՄ-ների լեզվի տարատեսակ շարահյուսական կապակցություններին ևս բնորոշ են խնդրառական կառույցների ոչ կանոնական դրսևորումներ, որոնք՝ իբրև բանավոր խոսք, ավելի շատ են, քան արդի մամուլի լեզվում:

Մեր նկատած սխալները հիմնականում ներկայացվում են հետևյալ խմբերով.

ա. Ոչ կանոնական ձևեր՝ պայմանավորված եղանակավորողների խնդրառական առանձնահատկություններով: Եղանակավորողների կողքին անորոշ դերբայի փոխարեն ըղձական եղանակով դիմավոր բայի գործածությունը բարբառայնության արտահայտություն է և գրական հայերենում անընդունելի:

Օրինակ՝ «Դու կարաս էսօր ընկերակցես ինձ» (ֆիլմ): Փխ.՝ Դու կարող ես այսօր ընկերակցել ինձ: «Կարանք ըստեղ խոսանք» (ֆիլմ): Փխ.՝ Կարող ենք այստեղ խոսել: «Էդ հարցի պատասխանը ես էլ կուզեի իմանայի» (ռադիո): Փխ.՝ Այդ հարցի պատասխանը ես էլ կուզեի իմանալ:

Մեր համար, քո համար, մեր վրա, իմ պես կապակցությունները հատուկ են խոսակցական լեզվին, քանի որ առաջին և երկրորդ դեմքերի անձնական դերանուններով արտահայտված կապի խնդիրը դրվում է տրական հոլովով, իսկ մյուս դերանուններով կապի խնդիրը՝ սեռականով:

Օրինակ՝ «Մեր (փխ.՝ մեզ) համար որոշակի խնդիր է առաջանում» (բժշկի խոսքից): «Մեր (փխ.՝ մեզ) համար էսի (փխ.՝ սա) էլ է անակնկալ» (ռադիո, ֆուտբոլասեր): «Իմ (փխ.՝ ինձ) համար առաջնայինը իմ ընտանիքն ա» (փխ.՝ է) (ֆիլմ): «Եթե նա սխալ է, ապա միայն քո (փխ.՝ քեզ) համար» (մուլտֆիլմ): «Մենք հույսներս պետք է դնենք մեր (փխ.՝ մեզ) վրա» (պատգամավորի խոսքից): «Ինձ նայիր, իմ (փխ.՝ ինձ) պես կանգնիր» (ֆիլմ):

¹ Տե՛ս Արթուրյան Ա., Պառնասյան Ն., Օհանյան Հ., Բաղդկյան Խ., Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Ե., 1976, էջ 369:

բ. Ոչ կանոնական հոլովածներ՝ պայմանավորված խնդրատական առանձնահատկություններով: Մա այն դեպքն է, երբ լրացումը՝ ստորադաս անդամը, չի ընդունում գերադաս անդամի պահանջած համապատասխան ձևը՝ հոլովը: Օրինակ՝ Բնչ հարցական դերանունը հոլովվում է անվանական հոլովմամբ, սակայն դրա փոխարեն գործածված է ինչո՞ւ հարցական դերանունը: Օրինակ՝ «Մենք ինչու (փիւ.՝ ինչի) համար որ պայքարում ենք, մեքենաների մաքսագերծման գների տոկոսի իջեցնելն է» (ռադիո):

Կհանդիպենք բայը իր իմաստով պահանջում է ներգոյական հոլովով տեղի պարագա հետևյալ օրինակում. «Շնորհակալություն, մենք նորից կհանդիպենք եթերը (փիւ.՝ եթերում)» (հաղորդավարի խոսքից):

Հայտնել բայը պահանջում է հանգման խնդիր տրական հոլովով, սխալ է բացատրականը: Օրինակ՝ «Շնորհակալություն եմ ուզում հայտնել եթերի մասնակիցներից» (փիւ.՝ մասնակիցներին) (ժյուրիի խոսքից): «Ես ինձ չեմ ների իմ ամբողջ կյանքը» (փիւ.՝ կյանքում) (Ֆիլմ): Այստեղ չեմ ների ոչ թե կյանքը, այլ չեմ ների կյանքում, կյանքի ընթացքում:

Տեսնել բայը պահանջում է ներգոյական հոլով հետևյալ օրինակում. «Աշակերտը շատ ուրախ էր, որ խորհրդարանը տեսավ իրականից» (փիւ.՝ իրականում) («Խորհրդ. ժամ» հաղորդումից):

Ծանոթանալ բայը իրի դեպքում պահանջում է հանգման խնդիր՝ տրական հոլովով: Օրինակ՝ «Ալեքսանդր, Ձեզ կարող եմ ծանոթացնել գործերի ընթացքը» (փիւ.՝ ընթացքին) (Ֆիլմ):

Բարբառի կամ խոսակցական լեզվի ազդեցությամբ են պայմանավորված հետևյալ ոչ ձիշտ հոլովածները: Օրինակ՝ «Մրանից հետո տնից մենակով (փիւ.՝ մենակ) դուրս չեմ գա» (Ֆիլմ): Մենակով է ասում նաև «Էպիկենտրոնի» հաղորդավարը: Այսպես՝ «Մա մի գործ է, որ ինքը մենակով (փիւ.՝ մենակ) չի եղել»: «Բնչքա՞ն ժամանակով (փիւ.՝ ժամանակամիջոցում, ժամանակի ընթացքում) եք նկարել էսփզը» (հաղորդավարի խոսքից): «Առայժմս (փիւ.՝ առայժմ) ունեմ երկու հրավերք» (երգչուհու խոսքից): «Հենց սրա համար եք ինձի (փիւ.՝ ինձ) կանչել» (Ֆիլմ): «Ես կորցրեցի իրան» (փիւ.՝ կորցրի իրեն) (Ֆիլմ): «Մրցումները շատ շուտվանից (փիւ.՝ վաղուց) են տեղի ունենում Հայաստանում» (սպորտի վարպետ): «Ավելի շատորեն (փիւ.՝ շատ) արտահայտվել է ՀՀ տնտեսության մեջ» (պատգամավորի խոսքից):

Գնալ բայը պահանջում է ո՞ւր հարցը և ոչ թե որտեղով հետևյալ նախադասություններում. «Կուրսեցուս հետ խնջույքից ենք դուրս եկել, գնում ենք տներով» (փիւ.՝ տները) (Ֆիլմ): «Գնացել են խանութներով» (փիւ.՝ խանութները) (Ֆիլմ): «Արի քեզ ուղեկցեմ, հետո էլ գնամ իմ գործերով» (փիւ.՝ իմ գործին գնամ) (Ֆիլմ): Գործին գնալ դարձված է, նշանակում է իր աշխատանքով զբաղվել:

Եթերից հաճախ է հնչում անձնական ինքը դերանվան սեռական հոլովի փոխարեն տրականի գործածությունը: Օրինակ՝ «Վաղը հիվանդը կվերադառնա իրեն (փխ.՝ իր) աշխատանքին» (ռադիո): «Գեղանկարիչ Նիկոլը լինում է Հայաստանում ամեն տեղ և ամեն ինչ պատկերում է իրեն (փխ.՝ իր) կտավներում» (ցուցահանդեսի այցելուի խոսքից): «Նա նշանավոր է իրեն (փխ.՝ իր) կատարումներով» (Ժյուրիի խոսքից):

Խոսակցական լեզվին է հատուկ անորոշ դերբայի բացառական հոլովի գործածությունը համակատարի փոխարեն: Օրինակ՝ «Նրան բռնել են գողություն անելուց» (փխ.՝ անելիս): «Ես տեսել եմ նրանց համբուրվելուց» (փխ.՝ համբուրվելիս) (Ֆիլմ): «Սիրելի՛ Քրիստինե, շատ հաճելի կլինի ֆիլմը դիտելուց» (փխ.՝ դիտելիս) (երգչի խոսքից):

գ. Ոչ կանոնական կապային կառույցներ: Հայտնի է՝ կապերը հարաբերակից են հոլովներին և դրվելով այս կամ այն հոլովաձևի վրա՝ արտահայտում են տարբեր հարաբերություններ, այսինքն՝ մի դեպքում առկա է հոլովներով, մյուս դեպքում՝ կապային կառույցով արտահայտված խնդրառություն: Դիտարկենք այս օրինաչափություններից կատարվող որոշ շեղումներ.

«Մեջ կապը գուգորդվում է անձանիշ, իրանիշ, վերացական գոյականների հետ, անորոշ դերբայի հետ չի գուգորդվում», - գրում է ակադեմիկոս Գ. Ջահուկյանը²: Մակայն ժողովրդական կենդանի խոսքում երբեմն դրանք կիրառվում են՝ առաջացնելով յուրատեսակ գուգաձևեր գրական լեզվի համար, դրանք գուցե և շեղումներ են, սակայն առօրյա խոսքում կարող են լինել, առանց չարաշահման: Օրինակ՝ «Ինձ մեղադրում են դատողություն անելու մեջ» (փխ.՝ անելու համար) (ռադիո): «Հիմա արկղը թաքցնելու մեջ իրեն չեն անհանգրստացնի» (փխ.՝ թաքցնելու համար) (կրկ. ֆիլմ): «Խոսելու մեջ անկաշկանդ էր» (փխ.՝ խոսելիս) (ֆիլմ):

Ժամանակակից գրական հայերենի համար օրինաչափական չեն մասին, մեջ, դեմ, նկատմամբ, հետ կապերի հետևյալ կիրառությունները: Օրինակ՝ «Նա չզլացավ գյուղի տնտեսությանը օգնելու մասին» (փխ.՝ օգնել) (ռադիո): «Ես միշտ հոգատար կլինեմ քո մասին» (փխ.՝ քո նկատմամբ) (ֆիլմ): «Հայ մարդը տասնամյակներ չի հասկացել պարտավորությունները պետության դեմ» (փխ.՝ պետության նկատմամբ) (պատգամավորի խոսքից): «Ես երբեք լավ բան չեմ լսել իմ նկատմամբ» (փխ.՝ իմ մասին) (դերասանի խոսքից): «Ամուսնալուծություն այսքան ամուսնության նկատմամբ» (փխ.՝ ամուսնության համեմատ) (ռադիո, զագսի աշխատակցի խոսքից):

Ժամանակակից գրական հայերենի համար օրինաչափական չէ շնորհիվ կապի կիրառությունը բացասական իմաստով: Օրինակ՝ «Ափսո՛ս, կապի շնորհիվ (փխ.՝ կապի պատճառով) պրոբլեմներ (փխ.՝ խնդիրներ) ունեցանք» (հաղորդավար):

² Ջահուկյան Գ., Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Ե., 1974, էջ 390:

Ճիշտ չեն հետևյալ կիրառությունները: Օրինակ՝ «Հնարավորինս չափ (փիլ.՝ հնարավորինս, ըստ հնարավորին, հնարավորության չափ) անկեղծ պետք է լինեն» (ֆիլմ):

«Փորձում եմ անակնկալի կերպով (փիլ.՝ անակնկալ կերպով) ասել. «Ես քեզ սիրում եմ» («Միտո խոստովանություն» հաղորդումից):

«Երգի պրեմիերան է, կատարում եմ զատիկի պատրվակով» (փիլ.՝ զատիկի աղթիվ):

Սեռական + հետ կապային կառույցով ձևավորված միասնության հարաբերությանը անձի դեպքում բնորոշ է փոխադարձ գործողությունը. այն ընդունում է միասնության պարագա, իսկ իրի դեպքում՝ հանգման խնդիր: Օրինակ՝ «Խորհրդարանի նախագահը, աշակերտներին ծանոթացրեց խորհրդարանական հիմնական խնդիրների հետ» (փիլ.՝ խնդիրներին) («Խորհրդ. ժամ» հաղորդումից): «Այնքան դժվար է նման բանի հետ համակերպվել» (փիլ.՝ բանին) (կրկ. ֆիլմ):

դ. Ոչ կանոնական ձևեր՝ պայմանավորված անվանական խնդրառական առանձնահատկություններով: Եթե բայական խնդրառության մեջ Վճռական դեր են կատարում բայիմաստն ու սեռային հատկանիշը, ապա անվանական խնդրառության մեջ՝ բառիմաստը, երբեմն նաև բայական հատկանիշ ունենալը:

Ձեկուցում բայանունը պահանջում է տրական հոլովով խնդիր կամ տրականով և կապով զուգորդված խնդիր: Մինչդեռ հեռուստաթերից քաղված օրինակում այդպես չէ: Օրինակ՝ «Առավոտյան պատգամավորի գեկուցումն էր խորհրդարանական ժամ» (փիլ.՝ ժամին):

Հոգատար ածականի տրականով խնդիրը կարող է արտահայտվել կապային կառույցով: Օրինակ՝ «Մայրը հոգատար է երեխայի մասին» (փիլ.՝ նկատմամբ) (ֆիլմ):

Ջուրկ ածականը, իր բառիմաստով պայմանավորված, պահանջում է բացառական հոլովով խնդիր: Օրինակ՝ «Ամայի մի վայր էր՝ զուրկ բուսականությունը» (փիլ.՝ բուսականությունից) (ֆիլմ):

«Հարևանուհիս գեղեցիկ է արտաքինից (փիլ.՝ արտաքինով) և լավն ա» (փիլ.՝ է) (ֆիլմ):

ե. Ոչ կանոնական ձևեր՝ պայմանավորված սխալ թարգմանությամբ: Հայերենը հարստանում է նաև այլ ժողովուրդներից կատարված թարգմանությունների միջոցով, որը նպաստում է մեր լեզվի զարգացմանը: Սակայն հաճախ նույնությամբ ընդօրինակվում են այնպիսի շարահյուսական կառույցներ, որոնք հայերենում ընդունելի չեն: Սա հիմնականում վերաբերում է կրկնօրինակված (և ոչ միայն կրկնօրինակված) ֆիլմաշարերին, որոնցում նույնացվում են հայոց և ռուսաց լեզվի իրողությունները:

Ռուսերենի ազդեցությամբ է պայմանավորված պատահել բայի հետ կապի խնդիրը: Օրինակ՝ «Լավ, բոլորիս հետ էլ (փիլ.՝ բոլորիս) կարող է պատահի» (փիլ.՝ պատահել) (ֆիլմ):

«Վատ գույների մեջ (փխ.՝ գույներով) են հագնվում» (նորաձևությանը նվիրված հաղորդումից):

«Շատ լուրջ վրթարի մեջ եմ ընկել» (փխ.՝ վրթարի եմ ենթարկվել) (կրկ. ֆիլմ):

«Ես միշտ երաժշտության մեջ եմ եղել» (փխ.՝ երաժշտությամբ եմ զբաղվել) (երգչուհու խոսքից):

«Դու ստիպված ես խանութի փակել հաճախորդներիդ բացակայությունից» (փխ.՝ հաճախորդներ չունենալուց, չլինելուց կամ չունենալու պատճառով) (կրկ. ֆիլմ):

«Մարդը դավաճանում է Սիրանուշի վրա» (փխ.՝ Սիրանուշին) (ֆիլմ):

«Ես դաստիարակվել եմ Ռ. Հախվերդյանի երգերի վրա» (փխ.՝ երգերով) («Երգ երգոց» հաղորդաշարից):

«Հետաքրքիր է, դա ինչքանո՞վ է նպաստել ժողովրդական երգի վրա» (փխ.՝ երգին կամ երգի զարգացմանը) (հաղորդավարի խոսքից):

Ժամանակակից գրական հայերենի համար օրինաչափական չեն մոտ³ կապի հետևյալ կիրառությունները. ա) «Նա իր մոտ է» (կրկ. ֆիլմ): «Ես հիմա գնում եմ ինձ մոտ»: «Նորության դեպքում ես ինձ մոտ եմ» (ֆիլմ): Փխ.՝ Նա տեղում է, գնում եմ իմ տեղը, ես իմ տեղում եմ: բ) Մոտ-ը գործածվում է մեջ-ի փոխարեն: Բերենք եթերից քաղված օրինակներ.

«Քեզ մոտ (փխ.՝ քո մեջ) բավական արժեքավոր մտքեր են ծագում» (մուլտֆիլմ): «Քանի որ քեզ մոտ ամեն ինչ դանդաղ է տեղ հասնում, ես ստիպված եմ հասկացնել» (ֆիլմ): Պետք է ասել՝ Քանի որ դու դժվար ես հասկանում, ես ստիպված եմ հասկացնել: «Մեղքը ուրիշ տեղ չպետք է որոնել, քան մեզ մոտ» (փխ.՝ մեր մեջ) (ռադիո): «Հարցի պատասխանը պետք է մնա պատգամավորի մոտ»: Պետք է ասել՝ Հարցին կպատասխանի պատգամավորը:

«Ինձ մոտ (փխ.՝ իմ մեջ) մի հարց առաջացավ» (հաղորդավարի խոսքից): Այստեղ՝ իմ մոտ (փխ.՝ իմ մեջ) շատ հետաքրքիր հարց է ծագում («Չէին սպասում» հաղորդումից):

Հայերենի համար օրինաչափական չեն՝ «Խնդիրը կայանում է նրանում (փխ.՝ խնդիրն այն է), որ գնաճը հասել է անկառավարելի մակարդակի» (ռադիո): «Հարցը դրանում չէ» (փխ.՝ այդ չէ) (ֆիլմ): «Հարցը ինչում է կայանում» (փխ.՝ հարցն ինչ է) (ֆիլմ):

Արդի ՁԼՄ-ների լեզվում ռուսերենից կատարված բառացի թարգմանություններ են հետևյալ դարձվածները, որոնք անթույլատրելի են: Օրինակ՝ «Դե, բնականաբար, երկուսդ էլ ձեր ամանի մեջ էիք» (ժյուրիի խոսքից): «Եվան իր ափսեի մեջ էր» (ժյուրիի խոսքից): Փխ.՝ Երկուսն էլ լավ էին զգում, Եվան լավ էր զգում, լավ տրամադրություն ունեւր:

³ Տե՛ս Աբրահամյան Ս., Ժամանակակից գրական հայերեն, Ե., 1981, էջ 237:

Կամ՝ «Ես ինձ տանն էի զգում» (կրկ. ֆիլմ): «Զգա քեզ ինչպես տանը» (կրկ. ֆիլմ): «Գնում եմ Լիլիթենց տունը, ինձ էնտեղ (փխ.՝ այնտեղ) զգում եմ ինչպես տանը» (ֆիլմ): Փխ.՝ ազատ զգալ, չամաչել:

«Ի՞նչ ես ուզում ասել, որ մեզ մոտ սուգ է» (փխ.՝ մենք սգի մեջ ենք) (կրկ. ֆիլմ):

«Դու որ ծնվեցիր, շատ բախտ բերեցիր» (փխ.՝ երջանկություն, բախտավորություն բերեցիր) (ֆիլմ):

Դերասանի խոսքը պետք է լինի օրինակելի, և եթերից (և ոչ միայն եթերից) չպետք է հնչի աղավաղված հայերեն: Զարմանալի է, որ հեռուստաընկերությունն է թույլ տալիս նման ձևով արտահայտվել հարցազրույցի հրավիրված դերասանուհուն:

Ինչպես՝ «Ինքը՝ անունը, լավն ա, բայց ես չեի ուզում, որ նույն անունը տան մեջ ֆոֆոար: Արի անուններով մի հարցրա, հին պոկալենի եմ, դեռ նոր տեխնիկային չեմ տիրապետում: Ես ինիցիատոր չեմ, բայց լավ իսպալնիտել եմ»:

- Ի՞նչ բացահայտեցիր քո (փխ.՝ քեզ) համար, - հարցնում է հաղորդավարը:

- Ես դա նայում էի Բուլգարիայում:

Կամ՝ «Ինձ թվում ա՝ ժամանակը էկել ա: Խոստանում եմ վաղը բուկետով գալ» (հաղորդավարի խոսքից):

«Հիմա մի գապրավկով կգնանք Կաբուլեծի և հետ կգանք» (զովագրային տեքստից):

Այսպիսով՝ արդի ԶԼՄ-ների լեզվի խնդրառական կապակցություններում ևս հանդիպում են ոչ կանոնական դրսևորումներ՝ պայմանավորված եղանակավորողների, բայերի, անվանական, հոլով- ներով և կապային կառույցներով արտահայտված խնդրառական առանձնահատկություններով:

НЕРЕГУЛЯРНЫЕ ФОРМЫ СОЧЕТАНИЙ С УПРАВЛЕНИЕМ В ЯЗЫКЕ СМИ

Барсегян А. Г.

Резюме

В сочетаниях с управлением в языке современных СМИ встречаются нерегулярные формы, обусловленные особенностями управления модальных, глагольных, именных, падежных и предложных сочетаний. Наиболее распространенные нормативные формы ошибок обусловлены влиянием иностранных языков, неполным знанием различных языковых и стилистических норм.